

22572

1914 № 2098

Հ.Պ-ի ժողովրդ. գրադ. № 1

Գրախօսական բաժին № 1

ԽԱԶԱՏՈՒՐ

Ա.ԲՈՎՅԱՆ

ВИБРАКОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОЧНОВЕДЕНИЯ  
Академия Наук  
СССР

Ձեռի լսանքամ «ՆԱԽԻՂ»-ի  
բաժանորդներին:

Хачатуръ Абовянъ

Б А К У

газеты „Баку“

891.99.092

re - 28

891.99.032 Արհիվանք  
Խ-28

6118

«ՇԱԻՂ»-ի ժողովրդ. գրադ. № 1  
Գրախօսական բաժին № 1

ԽԱԶԱՏՈՒՐ

Ա.ԲՈՎԵԱՆ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академия Наук  
СССР

Զեյի լուսերամ «ՇԱԻՂ»-ի  
բաժանորդներին:

Хачатурь Абовянь

Б А К У  
Типография газеты „Баку“  
1914.

2012

# ԽԱԶԱՏՈՒՐ ԱՐՈՎԵԱՆ



Թագ ըլի դու, դու, իմ  
պատուական ազգ, քո որդու ա-  
րածը, քո որդու խակ լեզուն սի-  
րես...

Խ. Արովեան

50487-ախ



36211-66

Հին ժամանակ մեր գրքերը գրւում էին գրաբար լեզուով, այն լեզուով, որով գրւած են եկեղեցական գրքերը: Այդ հին գրքերը հոգևորականներն էին գրում՝ հին-հին թագաւորների ու իշխանների, կաթողիկոսների ու սրբակեաց վարդապետների մասին: Այդ հին գրքերում պատմւում ու երգւում է Աստուծոյ մեծութիւնը, Քրիստոսի հրաշագործութիւնները և նահատակների կեանքը. բայց այդ հայերէն գրքերի մէջ համարեալ է յիշատակւում հայ ժողո-

վուրդը, այն ժողովուրդը, որ հին լեզուով կոչւում էր «ուսիկ, գեղջուկ»: Այդ գրքերը կարդում ու հասկանում էին միայն իշխաններն ու հոգևորականները. նրանց լեզուն ժողովուրդը չէր հասկանում, նա իշխանական, «սուրբ լեզու էր» համարւում. դրա համար էլ հայ զիւղական ժողովուրդը միշտ էլ տգէտ էր ու խաւար: Մինչև վերջին ժամանակներս ոչ ոք իրաւունք չունէր ժողովրդի լեզուով գիրք գրելու. դա մեծ յանցանք էր համարւում.

այդպիսի լեզուով գրողն էլ  
թէ հալածուում և թէ սոգէս  
էր համարուում:

Մեզանից 60—70 տարի ա-  
ռաջ մի քանի մարդիկ տես-  
նելով գրաբար լեզւի ու գը-  
րաբար գրքերի անօգտակար  
լինելը, փորձեցին աշխար-  
հաբար գրել, որ ժողովուրդը  
կարդայ ու հասկանայ: Թէև  
գրանք հալածանքների են-  
թարկւեցին, բայց նրանց գոր-  
ծը չմեռաւ: Այդ մարդկան-  
ցից ամենից մեծը Սաչատուր  
Աբովեանն է:

Ո՞վ է Աբովեանը:

Նա ծնւել է Երևանի մօտ՝  
Քանաքեռ գիւղում 1804—  
1805 թ. պարսից տիրապե-  
տութեան ժամանակ: Հայրն  
իբրև գիւղի անւանի մարդ՝  
իր որդի Սաչատուրին տա-  
րաւ էջմիածին և յանձնեց Ան-  
տօն եպիսկոպոսին՝ ուսում  
տալու: Սաչատուրն ընդու-  
նակ երեխայ էր: Մի քա-  
նի տարի սովորելուց յետոյ՝  
նրան փոխադրեցին Թիֆլիս,  
որտեղ կարճ ժամանակից յե-  
տոյ՝ 1823 թւին նա ընդուն-  
ւեց նորաբաց Ներսիսեան  
դպրոցը: Իր առաջին ուսու-

ցիչների մօտ նա կարգում էր միայն գրաբար եկեղեցական գրքեր. առաջին անգամ Ներսիսեան դպրոցում նա ծանօթացաւ ուրիշ գիտութիւնների հետ ևս և ուխտեց աւարտելուց յետոյ ծառայել ազգի կրթութեան գործին:

Աբովեանի հոգու մէջ ցուլացած այս ուխտն էր, անշուշտ, պատճառը, որ Ներսիսեան դպրոցն աւարտելուց յետոյ նա մտաւ Էջմիածնի հոգևորականութեան շարքը, որպէս կիսասարկաւագ և միաբան:

Բայց բազմը ուրիշ տեսակ էր տնօրինել՝ Աբովեանը չբարտի դառնար մի արժանաւոր հոգևորական, այլ՝ ազգի լուսաւորիչ: Այդ ժամանակ, 1829 թւին, երբ Հայաստանի հայաշատ նահանգները ոռոսաց ձեռքն էին անցել, Էջմիածին եկաւ Դօրպատի համալսարանի պրօֆեսօր Պարբօտը՝ Մասիս րարձրանալու: Նա կաթողիկոսի համաձայնութեամբ Աբովեանին իր հետ վերցրեց, որպէս տեղական կեանքին ծանօթ և թարգման:

Աբովեանը շատ դուր եկաւ պրօֆեսսօրին — որպէս խելացի, ուսումնասէր բնաւորութեամբ:

Պրօֆեսսօրը Դօրբատ վերադառնալուց յետոյ Աբովեանին իր մօտ կանչեց, և պետութեան հաշուով Աբովեան սկսեց սովորել այնտեղ: Նա մնաց 6 տարի, ստացաւ գիտութեան մեծ պաշար և վայելեց թէ պրօֆեսսօրի և թէ բոլոր շրջապատողների սէրն ու խնամքը:

1828 թւին Կովկասը ազատեց պարսից լծից և միա-

ցաւ Ռուսաստանին: Այդ դէպքը բաւականին խոշոր նշանակութիւն ունեցաւ կովկասահայերիս համար: Հայ ժողովուրդը շատ էր ոգևորւած այն յաղթութիւններով, որ տանում էին ուսաց բանակները պարսիկների դէմ. դրա համար էլ ամեն զոհողութիւն յանձն էին առնում ուսանների գործը յաջողեցնելու. հայ գիւղացիներից կազմւած կամաւոր խմբերը բոլոր կռիւներին համարեա մասնակցում էին, և հայ ժողովուրդը հաւատացած էր, որ

իր ազատութեան ժամը հըն-  
չել է:

Այդ բոլորը ոգևորում էին  
և երիտասարդ սարկաւազ  
Աբովեանին. սակայն նա միւս  
կողմից էլ տեսնում էր, որ  
հայ իսկական ժողովուրդ  
կազմողը՝ այն է հայ զիւղա-  
ցիութիւնը խաւար ու տգէտ  
է, նա արհամարհում է:

Այդ է պատճառը, որ երբ  
բաղդի բերմամբ նա Դօրպա-  
տում ուսման մէջ կատարելա-  
գործւեց և վերադարձաւ հայ-  
րենիք, վճռեց իր վաղուցւայ  
ուխտը իրագործել՝ իր ստացած

լոյսից բաժին հանել իր հայ-  
րենակիցներին, նրանց սրտից  
ու նրանց մասին խօսալ: Բայց  
խօսալ այն լեզուով, որ ամեն-  
քը հասկանան:

Սակայն այդ ժամանակւայ  
հոգևորականները, մանաւանդ  
կաթողիկոսը թշնամաբար էին  
վերաբերւում Աբովեանին.  
նրան համարում էին բողո-  
քական: Նրանց թշնամու-  
թիւնը մեծացաւ մանաւանդ  
այն ժամանակ, երբ Աբով-  
եանը ցանկացաւ աշխարհա-  
բար լեզուով դասագիրք գրել:  
Հոգևորականութիւնը՝ իբրև

հին կարգերի պաշտպան՝ բո-  
լոր ուժով զինւեց նրա դէմ  
և միջոցների մէջ խտրութիւն  
չէին դնում՝ նրան հալածելու  
համար:

Աբովեանը հրաժարւեց հո-  
գևոր կոչումից, մտաւ պետա-  
կան ծառայութեան՝ իբրև տե-  
սուչ նահանգական դպրոցի.  
սակայն նրան հանգիստ չէին  
տալիս, և նրա պաշտօնը շա-  
րունակ ցածրացնում էին,  
մինչև որ բոլորովին արձակե-  
ցին պաշտօնից:

Հոգևորականութեան ար-  
չամարհանքը դէպի աշխար-

հական՝ մանաւանդ ժողովրդ-  
դի հասարակ դասը այն աս-  
տիճանի էր, որ նա իր հո-  
գևոր դպրոցներում նրանց  
երեխաներին չէր ընդունում:

Պաշտօնից արձակւելուց յե-  
տոյ Աբովեան մասնաւոր  
դպրոց էր պահում. բայց միշտ  
էլ մի միտք նրան տանջում  
էր. ինչպէս լոյս ու գիտու-  
թիւն տարածէ իր հայրենա-  
կիցների մէջ: Նա տեսնում  
էր հայի յետամնացութիւնը,  
և սիրտը մորմոքում էր:  
Տեսնում էր, որ դրաբար գըր-  
քերը անհասկանալի են ժո-

դովրդին. տեսնում էր, որ նրանց բովանդակութիւնը չէ հետաքրքրում նրանց. տեսնում էր, որ ժողովրդի ցաւի ու հոգսի մասին խօսող չկայ. միւս կողմից՝ աշխարհաբար զրոյդին տգէտ են անւանում ու հալածում. ինչ անէր. չէ որ ինքը հազարաւոր վերստեր էր անցել, լոյս ու գիտութիւն ստացել ժողովրդի համար:

Ահա այսպիսի հազարաւոր մտքեր նրան տանջում էին, երբ նա մի անգամ վճռեց արհամարհել ծաղրն ու հալա-

ծանքը և գրել ժողովրդի լեզուով ու ժողովրդի համար:

Այդ նպատակն իրագործելու համար է, որ նա սկսում է գրել Աղասու պատմութիւնը, որ կոչւում է «Վէրք Հայաստանի»:

— Թող ինձ այսուհետև տրգէտ կանչեն. լեզուս բաց ա էլել՝ իմ ընտիր, ազիզ, իմ սրտի սիրեկան ազգ: Թող տրամաբանութիւն գիտեցողը իրան համբարի համար գրի, ես, քո կորած, շւարած որդին՝ քեզ համար... Թաք ըլի դու, դու՛



36211-0

ազգ, քո որդու արածը, քո որդու խակ լեզուն սիրես, ընդունես, ինչպէս հէրը իր մանուկի կմկմալը, որ աշխարհքի հետ չի փոխիլ:

Երբ որ կըմեծանամ, խրթին լեզուով էլ կը խօսանք: Աղասին քո որդին ա, սրանից դհա մեծ, դհա անլանիքը շատ ունիս. ինձ մի սիրտ տո՛ւր՝ արևիդ մատաղ գնամ, տես՝ թէ ի՞նչ ձեռով եմ գնում, նրանց բերում, առաջիդ կանգնեցնում, որ դու էլ զարմանաս՝ թէ էսպէս որդիք ունեցողը աշ-

խարհքումն էլ ի՞նչ դարդ կ'անի, երեսս ոտիդ տակը»:

Աբովեանն իբրև մի աշուղ՝ երգում է՝ պատմում իր հերոս Աղասու մասին, նրա քաջագործութիւնների, նրա ազնուութեան ու գեղեցկութեան մասին:

Նա իր զգայուն սրտի ամբողջ թափով սիրում էր իր հայրենիքն ու ազգը (հայ զիւղացուն), և այդ զգացումները նա գնում է զիւղացի պարզասիրտ ու քաջ Աղասու սրտում, որը պատրաստ էր ամեն բոպէ գոհ-

ւելու իր ազգի համար: Նա տեսնում էր խաւար ժողովրդին, որին ոչ մի ուշադրութիւն չէին դարձնում զօրեղները, սիրտը մորմոքում էր և սիրում էր տեսնել ժողովրդի ծոցից դուրս եկած անձնագոհ ու վրէժխնդիր անձինք, ինչպիսիք են Աղասին ու նրա ընկերները:

Աղասին մի գիւղացի պարզ երիտասարդ էր, ոչ թէ պատրաստ ծրագրով, որոշ ուղղութեամբ գործող, այլ մի հզօր բազուկ, որ ամեն տեղ պատրաստ է նեղած հային օգնութեան հասնել:

Արեւեանը այդ գրւածքով կոիւ յայտարարեց այն ամենի դէմ, ինչ որ հին էր և ամբողջ հոգով պաշտպան կանգնեց հայ գիւղացիութեան, նրա գործածական կենդանի լեզւին, որոնք այնպէս առանց հաշի արհամարհում էին:

Եւ նա յաղթանակը տալու:

Նրա գիրքը, իբրև մի յորդանոս գետ, քշեց, մաքրեց հայ գրական անդաստանից և՛ գրաբար լեզուն և՛ գրաբար գրականութիւնը՝ գործածու-

Թեան մէջ զնելով աշխարհաբար լեզուն և զրահանութեան նիւթ դարձնելով հայ գիւղական ժողովրդի կեանքը:

Նա իր գիրքը գրեց Քանաքեռի բարբառով, որը թէև այժմայ մեր գրական լեզուն չէ, բայց նա զբանով ցոյց տւեց, որ ժողովրդի համար պէտք է աշխարհաբար գրել, որ ժողովրդի լեզուն իրաւունք ունի ապրելու. նա չպիտի արհամարհի այնպէս, ինչպէս հոգևորականներն էին ասում:

Աբովեանի գրքի մէջ ա-

ռաջին անգամ երևան եկաւ գիւղական ժողովուրդը, իր ուրախութիւններով ու տրխութիւններով, իր սովորութիւններով ու նիստ ու կացով:

Այսպիսով նա հասկացրեց, որ եթէ հայ ազգի մասին են ուզում գրել, պէտք է գրեն գիւղական ժողովրդի մասին, որովհետև նա է ազգը կազմում, որ հայ ժողովրդին չպիտի իրաւագուրկ դարձնել ու արհամարհել, որովհետև Աղասին ու իր քաջ ընկերները, որոնք հայրենիքի ազատութեան համար ընկան,

հայ դիւղական ժողովրդի ծոցից դուրս եկան:

Սակայն Աբովեանը չտեսաւ իր գրքի տպագրութիւնը, որքան էլ նա ցանկանում էր:

Այդ գիրքը գրելուց մի քանի տարի յետոյ 1848 թ. ապրիլի 2-ին, առաւօտեան իրենց տնից դուրս եկաւ և այլևս չվերադարձաւ: Ո՛ւր գնաց, ի՞նչ պատահեց նրան, ոչ—ոք չգիտէ:

Եւ այսօր հէնց իր բռներով պարտաւոր ենք ասելու.

Գերեզմանը կորած, հողումը թաղւած..

Բայց ինքը չէ մոռացել, նրա յաւիտենական արձանը մնում է. դա նրա «Վէրք Հայաստանին» է, նրանով ստեղծած գործը՝ աշխարհիկ գրականութիւնը, որ օրէց օր մեծանում է:

Տ. Տ.—Գ

Ծանօթ.

Աբովեան բացի «Վէրք Հայաստանից» գրել է և գրաբար ոտանաւորներ, սոսկներ՝ «Պարապ վախտի խաղալիք» վերնագրով, «Յիշատակարան»՝ Մասիս սարը բարձրանալու նկարագրութիւնը, «Օվսաննա» վէպիկը և «Ֆէօդօրա» պատկերները:

**ՎՍՃԱՌՈՒՈՒՄ ԵՆ**

«ՇԱԻԻՂ» գրական-հասարակա-  
կան ժողովածու՝ զինը 25 կ.

«ՇԱԻԻՂ»-ի ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1—Խաչատուր Աբովեան  
զինը . . . . . 3<sup>1</sup>/<sub>2</sub> կ.

№ 2—Հայոց պատմութիւն  
(նախապատմական շրջ-  
ջան զինը . . . . . 3 կ.

**Տ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ**

ձեռնարկ հայոց պատմութեան

չին դար՝ զինն է . 70 կ.

Միջին դար՝ զինն է 55 կ.

Ժողովրդական դպրոց՝ 20 կ.

Դիմել՝ Баку, книжный магазинъ

„Посредникъ“.

Շարունակում է բաժանոր-  
դագրութիւն 1914 թ.

**„ՀՈՐԻԶՈՆ“**

հասարակակ., գրական օրաթերթ  
**ՎԵՅՅԵՐՈՐԴ ՏԱՐԻ**

Բաժանորդարձարն է 12 ամ. 8 ռ.,  
11 ամ. 7—50, 10 ամ. 7 ռ., 9  
ամ. 6—50, 8 ամ. 6 ռ., 7 ամ.  
5—50, 6 ամ. 4—50, 5 ամ. 4 ռ.,  
4 ամ. 3—20, 3 ամ. 2—40, 2  
1—60, 1 ամ. 80 կ.

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ  
ընդունում:

Հասցէն փոխելու համար պէ՛տ է ուղար-  
կել 40 կոպ. (կարելի է և մարկաներով  
եւ հին հասցէն, առանց որի դիմումները  
կը մնան անպատասխան:

„ՀՈՐԻԶՈՆ“-ի հասցէն—Тифлисъ, редакция  
„Оризонъ“.

ԲՃՇԿԱՊԵՏ

# Թ. Ն Թարխանեան

կանանց հիշանդոտքիւն, վիրակապոտքիւն եւ մանկաբարձոտքիւն:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝ օրւայ 12<sup>1/2</sup>—2 ժ. և երեկոյեան 5—7 ժ.: Կիւրակիները՝ օրւայ 10—2 ժ. և երեկոյեան 5—7 ժ.:

Հեռախօս 29—85.

Հայոց փող. Պարապետի անկիւն. Բաքաւեանի տուն (մախկին Աղամեանի), հայոց էկեղեցու դիմաց:

## „ВОСТОЧНАЯ ЛИРА“

Баку, уголь Колюбакинской и Кривой  
Рояли, Пианино, Муз. INSTR., Ноты  
Специальный настройщикъ роялей  
ПРОКАТЬ и ПОЧИНКА.

## „Պերվոտ“

# Տօվարիշչեստպօ

ԸՆԴԱՐՁԱԿ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆԻ ԽԱՆՈՒԹ,

Տօրգօվի փողոց, № 26 „Բեմքանդ“ լուսանկարչասան կողմին:

Տղամարդկանց, կանանց եւ երեխաների պատրաստի հագուստներ:

Խանութք ունի իր սեփական դերձականոցը, ուր ընդունում են տղամարդկանց, կանանց եւ աշակերտական ամեն ձևի հագուստեղենի պատրաստում:

Ապրանքը ստացել ենք մենք ինքներս անձամբ առաջնակարգ գործարանատերերից:

Գները նշանակած են շատ չափաւոր, որի համար խնդրում ենք յանախորդներին՝ անձամբ շնորհի քերել եւ համոզել:

ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆԻ

„ՐԻԺՍԿԻ  
ԽԱՆՈՒԹ“

վաճառատուն

Ս. Լ. Մ.-ՎԱՐԳՎԱՅՆՆԵՐԻ և ԸՆԿ.

Բազու, Տորգովի փողոց, Պալլովի տուն  
№ 20, հեռախոս № 24—13:

Տղամարդկանց, երեխաների  
պատրաստի հագուստներ,  
նոյնպէս և կանանց վերնա-  
զգեստներ:

Ամեն-մի սեզոնի նորութիւններ  
մեզապէս ստացում են:

Астраханскі й

Получень большой выборъ  
модныхъ манто.

ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆԻ

„ՆՍՏՐԱՒԵՆՍԿԻ  
ԽԱՆՈՒԹ“

ՊԵՏՐՈՍ ԲԱԲԱՅԵԱՆԻ

Բազու, անկիւն Կրասնոօթոսկի եւ Տոր-  
գովի փողոցների:

ՆՇԱՆԱԿԻԱԾ Է ՄԵԾ

ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ

ամեն տեսակի տղամարդկանց,  
կանանց և երեխաների պատ-  
րաստի հագուստների

ՋԵՂՋ 20—40%<sup>0</sup>

Большой выборъ мужскихъ и дѣт-  
скихъ костюмовъ.

Магазинъ

22572

2013

ЭЛЕКТРО-ТЕХНИЧЕСКАЯ  
МАСТЕРСКАЯ

**А. С. АРЗУМАНОВА**


фирма существуетъ съ 1904 г.

Баку, Биржевая ул., домъ Адамова № 18,  
телефонъ № 39—52. отделение по Стани-  
славской, уг. Балаханской № 105.

**ПРИНИМАЕТЪ НА СЕБЯ:**

полное оборудование электриче-  
скихъ станцій, электрическ. освѣ-  
щенія, передачи силы, проводка  
телефоновъ, звонковъ и разнаго  
рода сигнализаций, а также годо-  
вые абонировки

**РЕМОНТЫ:**



„Շ Ա Ի Ի Ղ“

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ունենալու է մեզապէս հետեւեալ բաժիննե-  
րը: 1) Գրական-գեղարվեստական, (ին-  
նորայն եւ քարզմանական), 2) Գրախո-  
սական, 3) Պատմական, 4) Առողջապա-  
հական եւ 5) Հասարակական-հաղաւա-  
կան: Բոլոր բաժինները բովանդակու-  
թեամբ եւ լեզուով մասշտիպի պիտի լինեն  
բանուորութան, զիւղագիտութան եւ աշա-  
կերտութան: Գրախօսական բաժինը ա-  
յլու է պարբերաբար հանրամատչելի յոյ՛  
ւածներ ուստանայ եւ արեւմտեան գրակա-  
նութեան ու մտքի ներկայացուցիչներու  
մասին: Պատմական բաժինը առ այժմ  
պէտք է սալ հարցոյ սրտամտութեան կույս-  
րական քննարկներէի տեսլիւնները: Առող-  
ջապահական բաժինը կը սալ անհրաժեշտ  
եւ նորագոյն գիտելիքներ առողջապահա-  
րիկից: Գրախօսական, պատմական եւ  
առողջապահական բաժինները պէտք է  
արտասպէս ամառցի ամեն-մի համարից  
փոքր դիրքով 2—3 կողմ, արձէնով—սա-  
րածելու ձողովդրդի, աշակերտութան մէջ  
եւ բաժանորդներին սալու որդէս ձրի  
յարելածներ:

Ամառցի առաջին №-ը լոյս կը տեսնի  
յունիս ամսին: Լոյս է տեսնելու  
ղովաձուն, 64, զինք 25 Է

ՀՀ Ազգային գրադարան



NL0626439

22030

6

Բացում է բաժանորդագրութիւն

„Շ Ա Ի Ի Ղ“

Ժողովրդական պատկերազարդ  
ամսագրի: Բաժանորդները սուր  
նախու են տարեկան 12 դիր  
ամեն-մէկը 72 երեսից և ամեն-  
գրքի հետ 64 երեսից ձրի յաւե-  
ւած փոքրիկ գրքոյկներ:

ՏՄՐԵԿՍՆ ԲՍԺՆԵՓԻՆՆ Է՛

- Բազւի համար . . . 3 ռ.
- Բազւից զուրս(Ռուսաս.) 4 ռ.
- Էրտասահման . . . 4—50 ռ.

Տարեկան բաժնեգինը կարելի  
է վճարել 3 նազ՝ ամեն-անգամ  
13 մասը: Խնդրում է նիւթեր  
դարկել՝ Баку, ул. Гоголя д. № 1  
Смбату Юзбашу. Բաժանորդագրու-  
ւել կարելի է Բազւի «Պօստե-  
նիկ» գրալուծառանոցում (հեթ  
№ 6-95) և Ս. Իւզրաշի մօտ: Մտե-  
րամասնութիւնները միւս երեսից

ԳԻՆՆ Է 3 Ա.

Հայտ  
СССР